րին, երեւի, շատ հաճելի չեղաւ տարաժամ հիւրերի այցելութիւնը. նա մրթմրթալով դուրս եկաւ իր դարանից, — «ո՞ր սատանան էս վախտը դուրս կը գայ իր բունից» — խօսեց քնթի տակից եւ սկսեց ձիաները ներս քաշել դէպի փարախը: Դա իմ նախածանօթ Մըհէն էր, որ առաջ աջակցում էր Աւօյին նրա որսորդութիւնների մէջ, իսկ այժմ մի աստիճան եւս բարձրացել էր իր պաշտօնի մէջ, դառնալով անասունների վերակացու: Տղերքը այն աստիճան սովորած էին նրան, որ ամենեւին ուշադրութիւն չդարձրին նրա դժգոհութեանը եւ պատոիրեցին շատ գարի եւ դարման տայ ձիաներին:

— Մըհէն գիտէ, ասել պէտք չէ, քսան տարի է, Մըհէն ձիաների հետ գործ ունի, — պատասխանեց նա խռպոտ ձայնով եւ դիմեց դէպի մարագը:

Որսորդի տնակը, բացի ախոռատնից, բաղկանում էր մի քանի փոքրիկ սենեակներից, որոնցից մէկը պատրաստուած էր հիւրերի համար. երբ ճրագ վառեցին, ամէնքը հաւաքուեցան այնտեղ: Շուտով յայտնուեցաւ եւ տանուտէրը, որ բակում Կարօյի հետ մեզ անլսելի ձայնով խօսում էր:

— Դէ՛, շուտ, Աւօ, տղերքը ուտել են ուզում, — դարձաւ դէպի նա Կարօն:

— Գայլի նման, — վրայ բերեց Սագօն, — ինչ «հոգու բաժին» ունես, ամէնը, ամէնը բե՛ր:

— «Տարաժամ հիւրը իր բախտից պէտք է գանգատոի», — պատասխանեց որսորդը թուրքերէն առածով: — Աստուծոյ տոածից ինչ ունեմ, կը բերեմ:

— Ու՞ր են, ոչ մէկը չէ երեւում, — հարցրեց Ասլանը:

— Յասոն դաշտումն է, նա իր անասուններն է պահում. անիծուած քրդերը իստակ կատաղել են, հէնց որ աչքդ հեռացնում ես, էլ ապրանքիդ տէրը չես: Մարօն քնած է, ես նրան կը զարթեցնեմ:

Նա դուրս գնաց ընթրիք պատրաստել տալու:

Ես մնացի աննկատելի: Ընկերներիցս ոչ ոք չխօսեց որսորդի հետ իմ մասին. իսկ ես ամաչում էի, որ մօտենամ, նրա ձեռքը համբուրեմ ու ասեմ՝ ես քո Ֆարհատն եմ, դու միշտ սիրել ես ինձ:

Բայց ինչո՞ւ ես այնքան ուրախացայ, երբ նա խոստացաւ զարթեցնել Մարոյին, ինչո՞ւ իմ աչքերն այնպէս անհամբերութեամբ նայում էին դէպի դուռը, որտեղից նա պէտք է ներս մտնէր: Ա՛խ, որքա՜ն սիրելի է լինում մանկութեան ընկերը, մանկութեան անմեղ բարեկամը:

Տղերքը մի կողմ դրեցին իրանց զէնքերը, նստեցին բուրդից գործած թանձր օթոցների վրայ, որոնցով ծածկուած էր սենեակի յատակը: Շատ չան-